ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА
MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF ARMENIA
CHIEF OF STAFF

«25» 05 2018
05/06 / 277-18

Հարգելի՛ Շուշան Դադոյան,

Ի պատասխան Ձեր 2018 թվականի մայիսի 23-ի հարցման՝ կապված սփյուռքի նախարարությունում առկա թափուր աշխատատեղերին՝ հայտնում ենք, որ ս.թ. մայիսի 23-ի դրությամբ նախարարությունում թափուր են նախարարի տեղակալի, մամուլի քարտուղարի, նախարարի գործավարի, աշխատակազմի ղեկավարի, աշխատակազմի մամուլի և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետի, աշխատակազմի տեղեկատվության և հեռահաղորդակցության վարչության հեռահաղորդակցության կազմակերպման բաժնի առաջին կարգի մասնագետի, Եվրոպայի հայ համայնքների վարչության արևելյան Եվրոպայի հայ համայնքների հետ կապերի բաժնի պետի, Ամերիկայի հայ համայնքների վարչության Հյուսիսային Ամերիկայի հայ համայնքների հետ կապերի բաժնի առաջին կարգի մասնագետի, համահայկական ծրագրերի վարչության մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ կապերի բաժնի առաջին կարգի մասնագետի, ֆինանսատնտեսական վարչության առաջատար և առաջին կարգի մասնագետների, իրավաբանական վարչության առաջատար մասնագետի, անձնակազմի կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետի, ներքին աուդիտի բաժնի պետի և գլխավոր մասնագետի, նախարարության վարորդի հաստիքները:

Հարցման երկրորդ կետին ի պատասխան հայտնում ենք, որ թափուր հաստիքների վերաբերյալ Քաղաքացիական ծառայության խորհրդի կայքում և «Հանրային ծառայություն» շաբաթաթերթում հրապարակվել էր ներքին աուդիտի բաժնի պետի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը՝ որը կայացավ ս.թ. մայիսիս 4-ին

ՀՀ 0010, Երևան, Վ.Սարգսյան 3
0010, РА, Ереван, ул. В.Саргсяна, 3
3 Str. V. Sargsyan, Yerevan, 0010

հեռ.՝/тел.:/tel.: (+374 10) 58 56 01 (611), 51 66 21
ֆաքս՝/факс:/fax.: (+374 10) 58 91 57
էլ.փոստ՝/Эл.почта:/E-mail: ministry@mindiaspora.am

ՔԾԽ-ում: Ինչպես նաև օրերս հրապարակվել էր նախարարության մամուլի քարտուղարի թափուր պաշտոնի վերաբերյալ հայտարարությունը՝ սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանի ֆեյսբուքյան էջում:

Քաղաքացիական ծառայության մասին օրենքի փոփոխության հետ կապված վերջին շրջանում թափուր տեղերի համար մրցույթներ չեն հայտարարվել:

Հարգանքով՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԵՐԵՄ ՍԻՄՈՆՅԱՆ

Կատ.՝
ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի
անձնակազմի կառավարման բաժին